

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

«ԳՈՎԱՆԻ ԹՈՒՉՆՈՅ» ՏԱՂԱՇԱՐԻՔ, ՆՐԱ  
ՀԵՊԻՆԱԿԻ ԵՎ ԺԱՄԱԿԻ

Աշխարհականացման հունի մեջ ընկած միջնադարյան հայ բանաստեղծությունը X—XIV դարերում հրապարակ հանեց ինչպես ձեռվ, այնպես էլ շոշափած հարցերով մի նորորակ հարստություն, որի ամբողջությունը զեռևս լրիվ չի ներկայացված։ Այդ հարստության մեջ առանձին ուշադրություն են գրավում այն փոքրածավալ ստեղծագործությունները, որոնց համար բնորոշ են համանման միավորներից կազմված շարքերը։ Այդպիսիներից են, օրինակ, հանելուկները, հայրենները։ Նման ստեղծագործությունների ուժը ամենից առաջ նրանցից կազմված շարքերի մեջ է, որովհետև դրանք այդպիսի ամբողջությամբ է, որ մեծ ներգործություն են ունենում։ Եթե մի միավորը բերում է մի մտքի, մի տրամադրության, մի խոսքի նորություն, ապա մի քանի տասնյակից ավելի միավորներն ստեղծում են համակողմանի և ընդհանուր տրամադրություն, անգամ ուղղություն։ Եվ միանգամայն բնական է, որ ժամանակի խոշոր բանաստեղծներ Ներսես Շնորհալին, Հովհաննես Երդրուկացին, Ֆրիկը, Խաչատրու Կեշառեցին և ուրիշներ մեծապես օգտվեցին բանաստեղծության այդ տեսակից, ստեղծելով բարձրարվեստ և բազմարությանդակ շարքեր։

Բանաստեղծների այդ խմբի ներկայացուցիչներից մեկն էլ ցարդ մոռացության մատնված Կիրակոս Եպիսկոպոսն է։ Վերջինս, օգտվելով բանաստեղծության նշված տեսակից, գրել է մի բացառիկ կարևորություն ունեցող շարք՝ նվիրված թոշունների գովքին։ Մեզ հայտնի է այդ շարքի երկու ընդօրինակություն. մեկը՝ ընդարձակ՝ XV դարից<sup>1</sup>, իսկ մյուսը՝ համառոտ՝ XVI—XVII դարերից<sup>2</sup>։

Ուշադրավ է, որ համառոտ օրինակում կան այնպիսի միավորներ, որոնք չեն ընդարձակում։ Օրինակ, ընդարձակում չկա համառոտի հետեւյալ միավորը։

Բաղան թեաւքն էր սուր և սայր,  
Երթար զամէն հաւերտ որսայր,  
Երբ ինք թոշէր սարէ ի սար,  
Նա սասանին հաւերտ հաւսար<sup>3</sup>,

<sup>1</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3595, թերթ 69ա—79թ։

<sup>2</sup> Նույն տեղում, ձեռ. № 738, թերթ 113ա—116թ։

<sup>3</sup> Տե՛ս կից ներկայացվող բնադրի 49—52-րդ տողերը։ Տե՛ս նաև 57—60-րդ տողերը, որոնք չեն ընդարձակում։

Երկու շարքերի միջև առկա են նաև այնպիսի տարբնթերցվածքներ, որոնք երբեմն հասնում են զգալի հեռավորության: Ընդարձակ շարքում կարդում ենք.

Զիւնձինիկ հաւուկ մի կայր,  
Որ ինքն յամէն աշուն կու գայր,  
Գայր ու հանց խապար կու տայր,  
Թէ՛ ո՞վ տուել կապա ի կար՝  
Ատոր ցուցէք ձիւնն կու գայր:

Համառոտ օրինակում այս 5 տողի փոխարեն ունենք հետևյալ 4 տողերը, որոնք ավելի հարազատ են թվում բնագրին.

Զինձնուկն ձայն ածէր  
Վասն ձմռան, էփ ձունըն գայր,  
Թէ՛ ո՞վ կապայ ունի անկար,  
Թող շուտ կարէ, որ չցրտանայր:

Վերջում կարելի է նկատի առնել նաև մի շարք այլ տվյալներ, որոնք խոսում են շարքի XIII—XIV դարերում ծնված լինելու օգտին:

Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված երկու շարքերի մեջ էլ իշխում է ոչ «օ»-ն, այլ «ա»-ը: Դա ցույց է տալիս այն ժամանակները, երբ դեռ «օ»-ն լայն օգուազործման շէր արժանացել: Այդպիսին էր վիճակը XIII—XIV դարերում:

Հիշված երկու ընդօրինակությունների մեջ էլ իշխում են գրաբարյան «զայր», «կայր», «վերանայր» և նման ձևերը՝ «զար», «կար», «վերանար» ձևերի նկատմամբ: Դա ևս մեզ հուշում է XIII—XIV դարերի իրականությունը:

Առանձնահատուկ նշանակություն ունի նույնահանգության պարագան. «Գովանք թոշնոցը» ծայրից-ծայր ստեղծված է միևնույն՝ այր, ար, առ հանդով, որը մեզ տանում է դեպի Ֆրիկյան նույնահանգության ժամանակները:

Կարելի է ուրիշ տվյալներ էլ հիշել, սակայն կարծում ենք, որ վկայակոչված փաստերն էլ լի ու լի բավարար են համոզվելու մեր առաջ քաշած կարծիքի հավաստիության հարցում:

Նման փաստերը համոզում են, որ համառոտ օրինակը դալիս է մի ավելի հին շարքից, քան XV դարի ձեռագիրն է: Նրա նկատմամբ էլ, սակայն, անհամեմատ մեծ առավելություններ ունի ընդարձակ օրինակը՝ ենթադրել տալով առավել հին նախահիմք: Բայց որ այդ բոլորի հիմքում ընկած հեղինակային օրինակն էլ XIII—XIV դարերից հին լինել չի կարող, դա անվիճելի է, որովհետև այդ շարքում կա ակնարկ թաթարական բռնությունների մասին.

Ուրուն ի շնորն կու կենայր՝  
Զեղ հարամի կամ զեղ թաթար,  
Առնոյր զհաւձագն ու բարձրանայր,  
Թէ հաղար մարդ կանգնած կենայր:

Այսպիսով, մնում է ենթադրել, որ «Գովանք թոշնոցը» ծնվել է XIII—XIV դարերում:

Հեղինակի մասին տեղեկանում ենք բանաստեղծության հենց առաջին տնից, ուր ասվում է.

Տէր Կիրակոս՝ հոգով տկար,  
Եպիսկոպոս՝ յերկիր աւտար,  
Կամիմ գովել զհաւք հաւասար՝  
Յուրախութիւն մարդկան համար:

Այս տունը հայտնում է ոչ միայն հեղինակի անունը (Կիրակոս), կոչումը (Եպիսկոպոս), այլև նրա պանդիտած և «յերկիր աւտար» ապրած լինելը: Ո՞րն է այդ երկիրը, տեղեկություն չկա. սակայն գովքի մեջ հիշվում է Լիբանանը և առայժմ ենթադրել տալիս այդ երկիրի մասին.

Արմաւն մեծ էր ու անհնար,  
Հայէր ծովուն յատակն ի վայր,  
Շալկէր շատ փայտ և վերանայր՝  
Լիբանանու լեռնէն ի վայր:

Կիրակոս Եպիսկոպոսի «Գովանք թոշնոցի» երկու շարքերն էլ ցարդ անտիպ են, հիմք են տալիս ստեղծել ըննական ընագիր և այդպիս հրապարակել այն, ուստի ստորե ներկայացնում ենք այդ ընագիրը:

Մեր ասելիքը թերեւս այսքանով էլ ավարտվեր, եթե նշված ստեղծագործության հետ կապված ըլինեին թյուրիմացությունները Բանն այն է, որ դեռևս XVII դարում նրանից օգտվել է Ստեփանոս Լեհացին և հիմք տվել իր անվան հետ կապելու այդ շարքից նրա արտածած տողերն ու տները: Հետո ձեռագրերում գտնվել են տաղի ուրիշ օրինակներ, այս անգամ՝ Տեր Հովհաննեսի անունով, որոնց համաձայն այդ ստեղծագործությունը վերագրվել է նրան: Այդպիս էլ ընդունված է այժմ: Այս թյուրիմացությունը պարզելու նպատակով նախ փորձենք ծանոթանալ հարցի ամբողջական պատմությանը, որը ինքնին հետաքրքրական է:

Դեռևս 1852 թ. Ղ. Ալիշանը, խոսելով Ստեփանոս Լեհացու մի անտիպ բառարանի մասին, ուշագրություն դարձրեց նրա մեջ առկա շափածո տողերի վրա և արտածելով տոլագրեց դրանք որպես թոշուններին նվիրված գովքի փշրանքներ: Ղ. Ալիշանի ենթադրությամբ դրանք կարող էին Ստեփանոս Լեհացու զրչի արդյունքը լինել<sup>4</sup>: Շուտով այդ շարքը վերահրատարակեց Մ. Միանսարյանը՝ նույն կարծիքով<sup>5</sup>:

Բայց ահա 1879 թ. Ն. Բյուղանդացին հրատարակեց «Տաղ թոշնոց» խորագրով մի ընդարձակ շարք, որն սկսվում է այսպես.

Ես Յովհաննէս հոգով տկար,  
Եւ վարդապետ յերկիր օտար,

<sup>4</sup> «Բաղմավէլպ», 1852, էջ 95:

<sup>5</sup> Մ. Միանսարյան, Քնար հայկական, Ա. Պետերովը, 1868, էջ 426—427: Ա՛յ Ղ. Ալիշանը, ո՞չ էլ Մ. Միանսարյանը շեն նկատել, որ այդ շարքից առաջ զետեղված տողերի մեջ եւ համանման մի տուն («Սարենկին սարսափէր...»), որը նույնպես նույն շարքին է պատկանում:

Կամիմ զովել զհաւք հաւասար  
Ուրախութիւն մարդկան համար:

Այս հիման վրա էլ նա իր հրատարակած բնագիրն ու խոսքը զետեղեց հետևյալ խորագրի ներքո. «Յովիանիս վարդապետի Տաղ թշնոց հանեալ ի Մատենադարանէ գրչագրաց Յ. Յ. Անտոնեան հայոց յօրքաֆէօյ»:

Ճիշտ է, այս բնագիրը մասսամբ պակասավոր է, սակայն տները համարակալված են (Ա—ԿԱ), որով և հնարավոր է լինում պարզել, թե՛ ամբողջ շարքի տնաքանակը (61) և թե՛ պակասող տների քանակը (շուրջ 10 տուն՝ Գ—ԺԴ):

Ն. Բյուզանդացին միաժամանակ ուշադրություն դարձրեց Ղ. Ալիշանի տալած տողերի վրա՝ ցույց տալով այդ և իր հրատարակած շարքերի նույնական ծագումը, ինչպես նաև Ստեփանոս Լեհացուն հեղինակ ճանաշելու անհիմն լինելը: Այստեղ նա տաղին կցեց Ստեփանոս Լեհացու բառարանում գտնվող բոլոր հատվածները՝ համապատասխան մեկնաբանություններով:

Այս տպագրությանը մասնավոր նամակով 1880 թ. անդրադարձավ Սուք. վարդ. Պատոնյանը՝ Ն. Բյուզանդացուն գրելով. «Կարի ախորժով ընթերցայ ի Մասիս օրագրին զՏաղ թունոց, գիւտ ցանկալի»: Ապա նա փորձեց այդ տաղի մեջ հիշված Հովհաննեսին նույնացնել մի ուրիշ Հովհաննեսի հետ, որից նըրան հայտնի էր «26 տուն քառատող զիւրոյ կենաց քանահիւսութեան և սկսանի այսպէս».

Ի Յովհաննէ առաջնորդէս  
Եւ ի բանից աշակերտէ...»<sup>6</sup>:

Պետք է ասել, որ այս Հովհաննեսը ոչ մի առնշություն չունի «Տաղ թունոցի» մեջ հիշված Հովհաննեսի հետ, ուստի այդ տեղեկությունը մնաց անհետականք:

Շատ շանցած, Հովհ. քահ. Մկրյանը հրապարտկ հանեց թոշուններին նվիրված տաղի մի այլ տարբերակ, որը նույնպես սկսվում է «Ես Յովհաննէս հոգով տկար» տողով: Այն չնայած բաղկացած է 19 տնից, բայց վերջին երկու տները ոչ այլ ինչ են, քան խրատական հայրեն, որը չի նկատել հրատարակողը: Ընդհակառակը, այն դրվատված է որպես տաղի ամենաարժեքավոր մաս:

Հովհ. քահ. Մկրյանի տպագրած օրինակն ունի այսպիսի խորագիր. «Տաղ և գովասանութիւն ամենայն հատց զոր ասացեալ է Յովիաննէս վարդապետէ»: Հասկանալի է, որ այս և նման ուրիշ խորագրերն ստեղծվել են շարքի սկրդնատողերի հիման վրա.

Ես Յովհաննէս հոգով տկար  
Եւ վարդապետ երկիր օտար...»<sup>8</sup>

6 «Մասիս» (օրաթերթ), Կ. Պոլիս, 1879, №№ 2478—2482:

7 Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվի բաժին, Ն. Բյուզանդացու արխիվ. թղթ. 235, վավ. 99:

8 «Երկրագունու», Կ. Պոլիս, 1884, էջ 316—320: Հետագայում այս օրինակը վերահրատարակվեց Հ. Քյուրտյանի կողմից («Հայաստանեալց եկեղեցի», 1841, էջ 115):

Հաջորդ բանասերը Կ. Կոստանյանցն է, որ 2 այլ ձեռագրերից (մեկը 1680, իսկ մյուսը՝ 1965 թթ.) քաղելով՝ հրատարակել է մի ուրիշ շարք՝ տարբերությունների նշումներով։ Այդ շարքը բաղկացած է 19 տնից<sup>9</sup>։ Նա նախորդ հրատարակությունների մասին չի խոսում։ Հեղինակի մասին էլ կատարում է մի թուցիկ նշում։ «Ահա Հովհաննէս հպիսկոպոսը օտար երկրում նկարագրում է երգով իւր հայրենիքի թոշուններին»<sup>10</sup>։ Հետագայում այդ օրինակը վերահրատարակվեց Մ. Մկրյանի կողմից<sup>11</sup>։

Թոշունների գովքին հատուկ ուշագրություն է նվիրել Ա. Չոպանյանը։ Նա ծանոթ է ինչպես Ն. Բյուզանդացու, Հով. քահ. Մկրյանի, Կ. Կոստանյանցի հրատարակություններին, այնպես էլ Երուսաղեմում գտնվող 2 անտիպ շարքերի, որոնց բոլորի օգտադրությունը հրատարակել է խմբագրված մի նոր շարքի թարգմանությունը՝ ֆրանսերեն լեզվով<sup>12</sup>։ Այն բաղկացած է 62 տնից և զուգորդված է մանրանկարչական թոշնագարդերով։ Հեղինակի մասին նորություն չկատարված է:

Իրերի այս դրության մեջ էր ահա, որ 1940 թ. մենք Մատենադարանի երկու ձեռագրերում (№№ 3595 և 738) հանդիպեցինք քննվող տաղի վերոհիշյալ երկու նոր շարքերին, որոնց սկզբի տան մեջ հիշված է ոչ թե Հովհաննեսի, այլ Կիրակոսի անունը։ Այդ մասին այն ժամանակ մենք կատարեցինք գրավոր հաղորդում, որը լույս տեսավ 1941 թ.<sup>13</sup>։ Այնտեղ գրել ենք. «Համեմատությունից պարզվում է, որ Տեր Հովհաննեսի տաղը Կիրակոսի տաղի զանազան տների խառնիխուռն դասավորության մի հատվածն է»<sup>14</sup>։

Նույն 1941 թ. թոշունների գովքին անդրադառ բանասեր Հ. Քյուրտյանը, շրջանառության մեջ դնելով նորահայտ մի շարք փաստեր։ Դրանցից ամենաուշագրավը Փարիզի նուպարյան Մատենադարանի ձեռագրերից մեկում նրա հայտնաբերած մի բանաստեղծությունն է՝ այսպիսի խորագրով. «Տաղս է ս[ր]բ[ո]յ զատկին, Կիպրացի վարդ[ա]պ[ե]տի ասացեալ»։ Տաղի վերջում հիշված է հեղինակի անունը՝ «Տէր Յովաննէս»։ Ըստ այդմ, Հ. Քյուրտյանը նրան կոչում է Կիպրացի Հովհաննես։ Եվ հենց այս հեղինակին էլ նա, իրավացիորեն, նույնացնում է թոշունների գովքում հիշվող Տեր Հովհաննեսի հետ։ Բանն այն է, որ Կիպրացի Հովհաննեսի այդ նորահայտ տաղում առկա են մի շարք տներ՝ նվիրված թոշունների գովքին, որոնք ստեղծագործական ատադով առնչվում են մեզ հետաքրքրող գովքի հետ։ Ուստի հիմք է ստեղծվում մտածելու նրա հեղինակի և Տեր Հովհաննեսի նույնության մասին։ Դա, հիրավի, նոր ու հետաքրքրաշարժ փաստ է։

Հ. Քյուրտյանը միաժամանակ տպագրել է թոշուց գովքի երկու նոր շարք. մեկը՝ իր անձնական ձեռագրերից, իսկ մյուսը՝ Երուսաղեմի № 1133 ձեռագրից։ Նա այդտեղ վերահրատարակել է Հով. քահ. Մկրյանի տպագրած շարքը՝ «Երկրագունտ» ամսագրից<sup>15</sup>։

9 Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Ա, Թիֆլիս, էջ 42—45։

10 Նույն տեղում, էջ 9։

11 «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն», Երևան, 1938, էջ 199—201։

12 A. Tchobanian, La rosierate d'Arménie, III, Paris, 1929, էջ 165—179։

13 Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, էջ 165—176։

14 Նույն տեղում։

15 «Հայաստանեալց եկեղեցի», 1941, հովար-փետրվար։ Նկատենք, որ այն ժամանակ

Հ. Քյուրտյանը շեր կարող տեղյակ լինել մեր հաղորդմանը, որը փաստորեն հրապարակ հան-

թոշունների գովքին հետագալում անդրադարձել է Ա. Տ. Պողոսյանը՝ տալով դիտական (թոշաբուժական-կենդանաբանական առումով) ուշագրավ ուսումնասիրություն<sup>16</sup>, նա այդուղի, հենվելով մեր հաղորդման վրա, թոշունների գովքը դիտել է որպես կիրակոս Եպիսկոպոսի ստեղծագործություն, շնայած տվել է նաև Տեր Հովհաննեսի անվան հետ կապվող փոփոխակների գնահատականը։ Այս գորի կապակցությամբ թոշունների գովքին վերադարձավ Հ. Քյուրտյանը, կամենալով հերքել մեր հաղորդումը և նրա վրա հենված Գ. Տ.-Ավետիքյանի կարծիքը՝ կիրակոս Եպիսկոպոսի հեղինակության օգտին<sup>17</sup>:

Վերջերս Ն. Պողարյանը հրատարակել է երուսաղեմի ԱՆ 1133<sup>18</sup> և 1236<sup>19</sup> ձեռագրերում պահպանված այն օրինակները, որոնք օգտագործված են Ա. Չոպանյանի կողմից և որոնցից առաջինը հրատարակել էր Հ. Քյուրտյանը։ Ն. Պողարյանը բանասիրական հարցեր չի շոշափել, իսկ նրա տպագրած օրինակներն ել սկսվում են Տեր Հովհաննեսի անունով։

Այսպիսով, փաստորեն հրապարակի վրա են լոկ Հովհաննես Եպիսկոպոսի անունով հայտնի շարքերը, և իսկական հեղինակն էլ համարվում է նա։ Պատկերացում, որը միանգամայն սխալ է և կարոտ արմատական վերանայման։ Եվ հենց դա է պատճառը, որ մենք շուրջ 40 տարի անց, նորից ենք մոտենում Կիրակոս, թե՛ Հովհաննես հարցադրմանը։

Հարցի պատշաճ լուծման նպատակով մենք «Գովանք թոշնոցի» վերևում հիշված բնագրից բացի, ծանոթացել ենք նաև ձեռագիր վիճակում գտնվող հետեւյալ ընդօրինակություններին։

1. Զեռ. № 695, թերթ 239—240 (1664 թ.)
2. Զեռ. № 5954, թերթ 20 (ԺՌ դ.)
3. Զեռ. № 7717, թերթ, 109 (1695 թ.)<sup>20</sup>
4. Զեռ. № 8448, թերթ 128—130 (1697 թ.)
5. Զեռ. № 9598, թերթ, 95—99 (1691 թ.)
6. Ն. Բյուզանդացու արխիվ, վավ. 235, թղթ. 55ա
7. Նույն տեղում, վավ. 55գ

Նկատենք, որ ձեռագիր այս օրինակների մեջ էլ առկա է նորից Տեր Հովհաննեսի անունը։ Բայց, թե իրոք, «Գովանք թոշնոցի» իսկական հեղինակը Կիրակոս Եպիսկոպոսն է և ոչ թե Հովհաննես Կիպրացին, դա անվիճելի է դառնում հետեւյալ փաստերի շնորհիվ։

Ա) Որքան էլ որ շատ են Տեր Հովհաննեսի անունով հայտնի շարքերը, այնուամենայնիվ դրանք, իրենց հնությամբ, XVII դարից այն կողմ շնորհնում, մինչդեռ Կիրակոս Եպիսկոպոսի անունով շարքերից մեկը գտնվում

վեց ոչ թե 1941, այլ 1942 թվականին։ Մենք էլ ծանոթ չենք Հ. Քյուրտյանի «Պողածաշարին», որովհետեւ մեր հաղորդումը առաջարկության էր հանձնվել դեռևս 1940-ին։

16 Ա. Գ. Տ.-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 467—477։

17 «Հասկ», 1968, էջ 74—77։

18 Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, Երևանաղեմ, դ, 1969, էջ 206—207։

19 Նույն տեղում, դ, 1972, էջ 327։

20 Այս օրինակը համանարար կ. Կոստանդնուպոլիսի օգտագործած վերռնիշյալ երկու օրինակներից մեկն է։

է XV, իսկ մյուսը՝ XVI—XVII դարերում ընդօրինակված ձեռագրերի մեջ: Ինչպես տեսանք, այդ ձեռագրերն էլ ծագել են ավելի հին աղբյուրներից, այն էլ ոչ անմիջապես, այլ միջնորդաբար, որով և հեղինակը կապվում է XIII—XIV դարերի հետ:

Իր առարկությունների և փաստարկումների ժամանակ Հ. Քյուրտյանը ևս ելակետ է ունեցել ժամանակի պարագան, սակայն, ընկնելով թյուրիմացության մեջ: Ըստ որում, այդ թյուրիմացությունը կրկնակի հիմք է ունեցել. այսպիս, նախ նրան այնպիս է թվացել, թե Կիրակոսի անունով հայոնի շարքերը գտնվում են XVI—XVII դարերի ձեռագրերում, իսկ Հովհաննես Կիպրացին իր վերոհիշյալ տաղը գրել է 1480 թվականին: Իրականում, սակայն, այդ երկու տեղեկություններն էլ ճիշտ չեն:

Առաջին թյուրիմացությունն ստացվել է Ա. Տեր-Պողոսյանի անզգություն հետեւանքով: Նա նշել է, թե Կիրակոսի անունով շարքերը գտնվում են XVI—XVII դարերի ձեռագրերում: Պետք է ասել, որ այս նշումը վերաբերում է լոկ № 738 ձեռագրին, բայց ոչ № 3595-ին, որովհետև այն ընդօրինակված է XV դարում: Ճիշտ է, նրա ժամանակի մասին կոնկրետ տվյալ չի պահպանվել, սակայն բոլոր մասնագետները վաղուց ի վեր, հնագրագիտական տվյալների քննությամբ այն համարել են XV դարի ընդօրինակություն: Այդպիս է արձանագրված բոլոր մատյաններում, քարտերում և այդպիս է ներկայացված ձեռագրացածակներում ու հետազոտությունների մեջ<sup>21</sup>: Այժմ էլ ոչ մի հիմք չկտայի թվագրումը վերանայելու, որովհետև ձեռագիրն անվիճելիորեն XV դարից է գալիս:

Ժամանակակից առումով հաջորդ շփոթությունը կապված է Հովհաննես Կիպրացու տաղի հետ: Նրա հրատարակված օրինակում, որը կատարել է Հ. Քյուրտյանը, կան այսպիսի տողեր.

Հայոց մեծաց ի թվականին  
Զ.-ի և Թ.-ին (1480)  
Բանս ասացաւ ի շափ տաղին<sup>22</sup>,

Այստեղ փակագծում զետեղված «1480»-ը Հ. Քյուրտյանի վերծանությունն է: Բայց որքան էլ որ շանալու լինենք՝ «Զ.-ի և Թ.-ին» տվյալից ոչ մի դեպքում նման տարեթիվ շենք կարող ստանալ: Եփոթությունն ակնբախ է: Բարեբախտաբար այդ աղաղակող շփոթությունը հետազայում նկատել է նաև ինքը՝ Հ. Քյուրտյանը և աշխատել ուղղել այն, տալով այդ տվյալի նոր վերծանություն:

Հայոց մեծաց ի թվականին  
Ռ. Հ. և Թ.-ին (1480)  
Բանս ասացաւ ի շափ տաղին<sup>23</sup>,

Այստեղ արդեն, իրո՞ք, առկա է իսկական փաստ, որի համաձայն Հովհաննես Կիպրացին հայտնում է, թե ինքն իր այդ բանաստեղծությունը գրել է

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ, «Յուղակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Ա, Երևան, 1965, էջ 1046. Տե՛ս նաև «Պատմութիւն Ֆարման Մանեկանն», Երևան, 1957, էջ 6, 50 և այլուր:

<sup>22</sup> «Հայաստանեայց եկեղեցի», 1941, էջ 125:

<sup>23</sup> «Հասկ», 1968, № 2, էջ 75:

ՌՀԹ, այսինքն,  $1079 + 551 = 1630$  թվականին: Հ. Քյուրտյանը, սակայն, այս-  
տեղ էլ նորից անփոփոխ է պահել իր սխալ վերծանությամբ ստացած «1480»  
թվականը, որը ոչ մի հիմք չունի նաև այստեղ: Ուստի կարող նոք ասել Հով-  
հաննես Կիպրացին, եթե այդ ժամանակ (1630 թ.) լիներ առավելն 50—60  
տարեկան, ապա նրա ծնունդը պիտի որոնեինք 1570—1580 թվականների մի-  
ջև:

Այսպիսով միանգամայն անվիճելի է այն փաստը, որ Կիրակոս Եպիսկո-  
պոսը շուրջ 300 տարով ավելի վաղ է ծնված, քան Հովհաննես Եպիսկոպոսը,  
իսկ նրա «Գովանք թոշնոցը» № 3595 ձեռագրում ընդօրինակվել է վերջինիս  
ծնունդից առնվազն մեկ դար առաջ:

Բ) Հաջորդ խոշոր փաստը, որ խոսում է մեր կարծիքի օգտին և որի մա-  
սին նշել ենք դեռևս մեր վերոհիշյալ հաղորդման մեջ, շուրջ 40 տարի առաջ,  
Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված շարքերի բնագրական անհա-  
մեմատ անաղարտ վիճակն է: Դա երեսում է ըննվող շարքերում գովերգված  
թոշունների թվարկման կարգեց: Վերեսում հիշված բոյոր ընդօրինակություն-  
ներն այդ ավյալով, ինչպես տեսանք, բաժանվել են երկու խմբի.

ա) Ըստ հայոց այրութենի գրված շարքեր:

բ) Խառն դասավորությամբ շարքեր:

Առաջին խմբի ընդօրինակությունները պահպանված են Կիրակոս Եպիս-  
կոպոսի անունով, իսկ երկրորդ խմբինը՝ Տեր Հովհաննեսի: Ըստ որում, առա-  
ջին խմբում գործ ունենք մտածված ու բանիմաց անձնավորության ստեղծած  
շարքի հետ, իսկ երկրորդ դեպքում՝ խառնիխուռն և շպատճառարանված դա-  
սավորության: Եվ քանի որ թե՛ ըստ հեղինակի և թե՛ ըստ ընդօրինակման ժա-  
մանակի առաջինը դարեր ընդգրկող ժամանակամիջոցով կանխում է երկրոր-  
դին, ուստի միանգամայն անվիճելի է առաջինի նախնականությունը:

Այս առումով կարեռ նշանակություն ունի նաև շարքերի ծավալը: Ուշա-  
գրավ է, որ ամենաընդարձակ շարքը ամենահազույն շարքն է՝ պահպանված  
№ 3595 ձեռագրում և գրված ըստ այրութենի տառերի հաջորդականության:

Ինչպես երեսում է, Տեր Հովհաննեսի արտածումներն էլ հետազայում ի-  
րենց հերթին են ենթարկվել վերտասավորումների: Այդպիսի միտք է ծագում,  
օրինակ, Հովհ. քահ. Մկրյանի տպագրած շարքի քննությունից: Այստեղ առա-  
ջին տանը հաջորդում են «Քաջ արծուին», «Արծիւն», «Արմաւն», «Անկղն»,  
«Արօսն» թոշունների գովքերը: Համեմատությունից պարզվում է, որ Կիրա-  
կոս Եպիսկոպոսի շարքում «Քաջ արծուին» տունը գտնվում է շարքի վերջում,  
իսկ այստեղ՝ սկզբում՝ «Արծիւն» տնից առաջ: Պարզ է, որ այդ տեղափոխու-  
թյուն կատարողը, հետեւլով հանդերձ այրենական կարգին, փորձել է թոշուն-  
ները խմբել նաև ըստ տեսակների, ուստի «Քաջ արծուին» տունը շարքի վեր-  
ջից բերել է սկիզբ՝ «Արծիւն» տան մոտ: Այս եղանակով նույն շարքում մի-  
մյանց մոտ են բերված «Քայլագուաւն» ու «Ագուավը», «Սունդուր բաղէն» ու  
«Շահէն բաղէն» և այլն: Նկատելով այս օրինաշափությունը, միաժամանակ  
շարքում շենք տեսնում ընդհանուր միասնականություն. այնտեղ վերստին առ-  
կա են խախտումներ:

Այս բոլորը նորից են համոզում, որ Կիրակոսի անունով պահպանված  
շարքերը ավելի հին են և ավելի հարազատ հեղինակային եռած ինքնագրին:

Գ) Որ Հովհաննես Եպիսկոպոսը կամ Կիպրացին ըննվող շարքի իսկական  
հեղինակը չէ, այլ հետազայում նրանից օգտվող անձնավորություն, դա երեսում

է նաև հետեւյալ փաստից: Թուշունների գովքը Հովհաննես Կիպրացու անվան հետ կապված է երկու ճանապարհով: Առաջինը՝ վերեւում թվարկված շարքերն են «Ես Յովհաննէս...» կամ «Տէր Յովհաննէս...» սկսվածքով: Այստեղ գործունենք ուղղակի «Գովանք թոշնոցից» առնված տների հետ՝ որոշ մշակումներով: Երկրորդը՝ Հ. Քյուրտյանի հայտնաբերած բանաստեղծությունն է՝ «Տաղու է ս[ր]բ[ո]յ զատկին, Կիպրացի վարդապէջի ասացեալ» խորագրով: Այս ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, քան Մուրատ Խիկարի հայոց զատկին նվիրված հանրահայտ գովքը: Միայն թե այստեղ այն հարստացված է Կիրակոս Եպիսկոպոսի «Գովանք թոշնոցի» որոշ տների վերամշակումով, ինչպես նաև այլեւայլ տների շարակցումով: Հետաքրքրական է, որ բոլոր տների մեջ էլ որպես կրկնակ օգտագործված է «Յորժամ հայոց զատիկն գայր» տողը՝ առնըված Մուրատ Խիկարից<sup>24</sup>:

Որպեսզի ընթերցողին փոքր-ինչ տեղեկություն տված լինենք Հովհաննես Կիպրացու այդ տաղի և Մուրատ Խիկարի նշված բանաստեղծության առնշության մասին, ընդորինակում ենք առաջինի սկզբի երկու տները.

Մարտն կու գայ ծաղկըներով,  
Յերկնից հաւերն կարդալով,  
Հրեշտակապետ փառս տալով,  
Յորժամ Հայոց զատիկն դայ:

Ամբն ի երկինսն խիստ գոռաց,  
Զողորմութեան ցողըն ցողեաց,  
Լոյս գերազանց ղերկիր ծագեաց,  
Յորժամ Հայոց զատիկն դայ...

Ամեն ինչ այնքան ակնբախ է, որ ավելորդ ենք համարում զուգահեռացար վերհիշել Մուրատ Խիկարի տաղը<sup>25</sup>:

Այսպիսով տեսնում ենք, որ Հովհաննես Կիպրացին իր «Կիպրացի վարդապէջի ասացեալ» տաղում փաստորեն օգտագործել է ոչ միայն Կիրակոս Եպիսկոպոսի «Գովանք թոշնոցը», այլև Մուրատ Խիկարի՝ Զատկի գովքը: Նա դրանք (ըստ երևութին նաև ուրիշ տաղերի որոշ մասեր) միմյանց է ձուլել և ստացել մի նոր ու բնդարձակ տաղ: Թո՛ղ որ այդ համաձուլվածքի տերը համարվի ինքը՝ Հովհաննես Կիպրացին, սակայն բանասիրական միտքը պիտի կարողանա պաշտպանել նախ և առաջ այն հեղինակների իրավունքները, որոնցից օգտվել է նա: Ուստի ճիշտ չի վարվել Հ. Քյուրտյանը ոչ միայն Կիրակոս Եպիսկոպոսի նկատմամբ, այլ նաև Մուրատ Խիկարի, եթք Հովհաննես Կիպրացուն է հատկացրել նաև Մուրատ Խիկարի տաղը՝ տպագրելով նոր օրինակներ<sup>26</sup>: Միաժամանակ չենք կարող չնկատել, որ Հովհաննես Կիպրացին ունեցել է նաև բանաստեղծական որոշ շնորհը և կարողացել է քաղածո ու սեփական տներից ստեղծել մի մեծածավալ բանաստեղծություն, որն օտար և հե-

24 Հ. Քյուրտյանը ընականաբար նկատել է Մուրատ Խիկարի անունը, սակայն ոչ միայն կարենություն շի տվել դրան, այլև հրատարակել է նրա տաղի («Գովք զատիկ») նոր տարբերակներ՝ դարձյալ Հովհաննես Կիպրացու անունով:

25 Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Բ, էջ 5—7:

26 «Հայաստաննայց նկեղեցի», 1941, հունվար-փետրվարի համարներում:

ուավոր ափերում հնչել է որպես Հայրենի աշխարհի, նրա գարնան ու բնության կարուտալից զովերգություն։ Այս առումով Հովհաննես Կիպրացու ջանքերը կարուտ են քննության և զնահատման։

Այսպիսով, տեսնում ենք, որ մեր միջնադարյան պոեզիայում հանդիպող այն բոլոր մեծ ու փոքր շարքերը, որոնք վերաբերում են թոշունների զովքին, պատկանում են ոչ թե Հովհաննես Կիպրացուն կամ Տեր Հովհաննեսին, այլ Կիրակոս Եպիսկոպոսին և պրված են XIII—XIV դարերում։

Ասվեց, որ այդ շարքից առաջ ու հետո նման շարք չի գրվել, չնայած, թոշունների թեման տարբեր ձևերով մշակվել է։ Այսպիս ասելով, նկատի ունենք, օրինակ, Հովհաննես Սարկավագի Հայտնի քերթվածք՝ նվիրված սարյակ թոշունին, վարդի և սոխակի գովքը՝ տարբեր հեղինակների մոտ և զանազան թոշունների առկայությունը՝ այլարնույթ երգերի մեջ։ Այստեղ առանձնապես ուշագրավ են Ներսես Շնորհալու Հանելուկներում տեղ գտած թոշունները, որոնց մեջ հասած և ստուգված քանակը հավասար է շուրջ երկու տասնյակի։ Նույնիսկ հիմք կա մտածելու, թե Կիրակոս Եպիսկոպոսը իր տաղաշարքը մրտահղացել է այդ Հանելուկների ազդեցությամբ<sup>27</sup>։ Այդ տպավորությունն ենք ստանում, երբ Համեմատում ենք նրանց, հիմնականում, քառատող լինելը, յամբական 8 վանկանի տողերը, նույնահանգության եղանակը, թոշունների անվանումները, խոսակցական լեզուն, ժողովրդական ոճը և այլն։ Մեր կարծիքն ավելի համոզիլ է դառնում, երբ հիշում ենք, որ հենց նույն XIII—XIV դարերում Հովհաննես Սործորեցին, Տիրատուր Վարդապետը և ուրիշներ, Ներսես Շնորհալուն հետեւելով, գրում էին համանման Հանելուկների նորանոր շարքեր։

Երերի այս դրության մեջ նպատակահարմար ենք գտնում առայժմ տալ միմիայն Կիրակոս Եպիսկոպոսի անունով պահպանված շարքերի քննական բնագիրը։ Ինչ վերաբերում է Տեր Հովհաննեսի անունով տարածված շարքերին, ապա դրանք կարուտ են առանձին քննության։

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ X—XIV դարերում սկզբանավորված և զարգացման հունի մեջ ընկած Հայ նոր գրականության լավագույն նմուշներից մեկը «Գովանք թոշնոցն» է։ Այն մեզ Հայտնի միակ ու լիարժեք ստեղծագործությունն է՝ Հայրենի բնության թևավորների՝ թոշունների մասին։ Նրա հեղինակը ոչ Ստեփանոս Լեհացին է և ոչ էլ Հովհաննես Կիպրացին,

27 Ահա Ներսես Շնորհալու Հանելուկներում տեղ գտած թոշունների անունները. սիրամարգ, խօսող, արագիլ, տատրակ, բուրաք, ծիծառ, ցոխարիկ, դրուեն, շնօռ, նորալ, շիտ, անձեղն, արտուտ, բրուեց, քոր, սազ, կաբաւ, ազուր (4 Հանելուկ), համաւ, խիթ (օգտվել ենք 1321 թվականի ընդօրինակությունից՝ պահպանված Մաշտոցի անվան Մատենադարանի № 2961 ձեռագրում)։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 771 ձեռագրում (թերթ 437ա), XVIII դարի գրչությամբ, թվարկված են թոշունների հետեւալ անունները. «Արմատ, անկղ, արօս, սազ, սիրամարգ, կռունկի, մարփ, հաւալուան, արավնի, խշուկմուխ, կասկամ, խիթ, ձկնելուլ, շնոռ, արագիլ, կաշաղակ, կեռիկառուց, տատրակ, կովկառութիկ, ծիծեռն, հոփոփիկ, ծիտ, խոսօղ, արտափիկ, անծղ, բուրաք, ծունձունակ, լծել, մանողակ, պիլսլուլ, եզնարութիկ, քու, յովանակ (Յովանահանա՞ւ), սարեկ, պղպել»։

Նույն ձեռագրի 198ա թերթում ներմուծված է «Բառք զիտելիք ի դիպօղ ժամու ուրուեցից» խորագրով փոքրիկ բառացանկ, ուր կան թոշունների անուններ. Ցին, անգղ, հաւառ (Հաւատութիկ), նողամաղ, շաշանա, սոխակ, հաւալուան, կարպ, շաշարդ, յոպուր, շիղ, ցուեան (ցախսորենիկ)։ «Չիդչ»-ը՝ շոշիկն է՝ դասված թոշունների շարքը։

որոնք ապրել են XVII դարում: «Գովանք թոշնոց» պատկանում է XIII—XIV դարերում ապրած Կիրակոս Եպիսկոպոսի գրչին:

Որպես շափածո ստեղծագործություն «Գովանք թոշնոց» արժանի է հատուկ բննության: Առենք միայն, որ այն XIII—XIV դարերից մեզ հայտնի սակավաթիվ այն ստեղծագործություններից մեկն է, որոնք ամբողջապես աշխարհիկ են և լիովին ազատագրված կրոնական տուրքից ու առնչությունից: Հեղինակը նկատի է ունեցել սոսկ բնությունը և նրա անազարտ գովքը՝ հենց սկզբից ասելով.

Կամիմ գովել զհաւը հաւասար՝  
Յիւրախութիւն մարդկան համար...

Ներկայացվող բնագիրը բաղկացած է 91 բառատող տնից: Կան 2 տներ, որոնցից մեկը՝ 5, իսկ մյուսը 6 տողանոց է (193—197 և 346—351-րդ տողեր). Դա հավանաբար հետազայի փոփոխության արդյունք է: Որպես կանոն ամեն տան մեջ գովերգված է մեկ թոշուն, բացի առաջին տնից, որն ունի հիշատակարանային բնույթ: Մնացած 90 տներից 8-ում կրկնված է նույն 8 թոշումների (ազուր, անձեղն, գուգու, կաքաւ, ճնճղուկ, շահէն բազէ, շիտ, պլազու) գովքը, իսկ սիրամարդ թոշունին նվիրված է 3 տուն (302—314-րդ տողեր): Փաստորեն 91 տնանոց շարքում տրված է 80 թոշունի գովք: Բոլոր տներն ավարտվում են այր, ար (առ) հանգով՝ շաշված առանձին տողերում նկատվող մասնակի շեղումները: Միայն 2 տան (37—40 և 206—209-րդ տողեր) հանգերն այլ են. իսկ դա ենթադրել է տալիս, որ այդ տները հետո են մուծվել շարքի մեջ:

Քննական բնագիրը կազմելիս, միօրինակության նպատակով կատարել ենք հետեւյալ մասնակի ու անհրաժեշտ միջամտությունները.

ա. Պահելով մասսայաբար օգտագործված «աւ» ձեր, մեկ-երկու գելքում հանդիպող «օ»-ն դարձրել ենք «աւ»:

բ. Սակայ հանդիպող վերա, զետ, եփ, երփ և բատ ձեերը ճշտել ենք տաղաշարքում իշխող վերայ, զեղ, երք և բադ ձեերով:

գ. Առավելություն ենք տվել մասսայաբար հանդիպող կայր, զայր, կարաւանայր և նման ուրիշ բայածեներին՝ ավելի սակայ օգտագործված կար, զար, կարաւանար ձեերի նկատմամբ:

Կետադրությունը, տնատումը և տողակալումը՝ մերն են:

## ԿԻՐԱԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

### ԳՈՎԱՆՔ ԹՌՉՆՈՑ

Տէր Կիրակոս՝ հոգով տկար,  
Եպիսկոպոս՝ յերկիր աւտար,  
Կամիմ գովել զհաւք հաւասար՝  
Յուրախութիւն մարդկան համար:

5       Արծիւն իշնէր շառանշելով,  
Դայր ի լերանց բարձանց ի վայր,  
Առնէր զորսն և վերանայր,  
Երթայր նստէր այլ վայր ի քար:

10      Արմաւն մեծ էր ու անհնար,  
Հայէր ծովուն յատակն ի վայր,  
Շալկէր շատ փայտ և վերանայր  
Լիրանանու լեռնէն ի վայր:

15      Անկղն իմաստուն էր և խիկար,  
Նայ զմեռնելու մարդն իմանայր,  
Երբ մարդն ի յինքն հոտոտայր,  
Նայ հոտն գար մուշկ ու ամբար:

#### Աղյուրներ

A=Զեռ. № 3595, թերթ 69ա—79բ: ԺԵ դ.:  
B=Զեռ. № 738, թերթ 113ա—116բ: ԺԶ—ԺԷ դդ.:

#### Խորագիր

B Անխորադիր:

#### Բնագիր

- 1 A Ես Կիրակոս:
- 3 B զհաւերս:
- 4 B Աւրախութեանն:
- 5 B շառընշելով:
- 7 A ըզորսն:
- 9 A անհունար: B մեծ է:
- 10 A Հայէր ընդ ծովուն ատակն:
- 11 B Շալկէր:
- 14 A յիմանար: B Զմահկանացու մարդն յիմանայր:
- 15 A յինքըն:
- 16 A յամբար: B Կոր հոտն գայր:

Արաւարն մեծ էր քան զոշխար,  
Զաւըն ի դաշտերդ կու կենայր.  
Երբ կու թոշէր՝ նայ ցած կերթայր,  
20 Զեղ գէր մարդուն հնունն զայր:

Աղամին ոսկի փետուր,  
Քան զամենայն հաւերն՝ արդար.  
Նորա կապեն երամ հաղար  
Եւ մի կամաւք վարին յաւծար:

25 Ագուան ի նոյի տապանն կայր,  
Երբ չըհեղիղըն կու ծփար՝  
Ի դուրս ելաւ խապրի համար,  
Ի յետ չդարձավ. անէծք էառ:

Ագուան խեռ էր ու յարար,  
30 Զաւըն բարի խապար կու տայր.  
—Տիկին, յարի ձուածեղ եփէ,  
Քեղի բարի հիւր մի կու դայր:

Արտուտիկն էր դրել վեղար,  
Զեղ հարեղայ աղաւթարար,  
35 Առաւաւտուն երբ լուսանայր,  
Գովեր ըզտէրն բարերար:

Արագիլ մեծ հաւ ու հով,  
Երկայն ու բարակ ճըվերով,  
Ի ձոր ի վայր զայր խաղալով.  
40 Գորտներ ու խըլեղ քաղիլով:

17 Յ Արաւան մէծ է զէտ:

18 Ա Երբ կու թոշէր նայ ցած կերթար: Յ դաշդերը կու կենայր:

19 Ա Զաւըն յարտերըն կու կենար: Յ Երփ:

20 Ա մարդու հնունըն: Յ Զէտ: Հնուն զայր:

21 Ա Աղամի:

22 Յ Հաւերու:

23 Յ Նոյ յըղարկեց, թէ բեր խապար:

24 Յ Նա երթայր կանանշ տերեւ առնէր ու զալր:

25 Յ տաճարն կայր:

26 Ա ծրփար: Յ Երփ չըհեղիղն կու ծփայր:

27 Ա զուր: Յ Նոյ յըղարկեց թէ բեր խապար:

28 Ա զանեծք: Յ Նայ փիս ի:

29 Յ 29—32 շիբ:

31 Ա ձուազեղէ փիս ձուաձեղ եփէ:

33 Ա 33—36 այսպէս.

Արտուտիկն երբ ճըվընար,

Առաւաւտուն երբ լուսանայր,

Անդադար փառաբանէր զմեր տէրն,

Որ յեաթն երկինքըն կար:

35 Յ եփ լուսանայր:

37—40 Յ շիբ:

Անձեղն զիտէր զբարին և զշար,  
Ամէն մարդոյ կայնէր խապար,  
Զամէն երթայր նստէր ի ծառ  
Ու կու մատնէր զինչ կու տհսնայր:

45 Անձղան ագին էր խիստ յերկար,  
Ինքըն թոշէր ի ծառէ-ծառ,  
Երբ որ բարի խապար լըսեր,  
Նայ գայր յերդիքըն կարկըջայր:

Բազան թեաւքն էր սուր և սայր,  
50 Երթայր զամէն հաւերտ որսայր,  
Երբ ինք թոշէր սարէ ի սար,  
Նա սասան'ին հաւերտ հաւսար:

Բըրոէճի աշւին՝ շաղար,  
Զարեգական լոյսըն շտեսնայր.  
55 Ինքըն զիշերն ի շուռ կու գայր,  
Զզողն ու զտոառ մարդն լիմանայր:

Բուն կու շրջէր զիշերավար,  
Յորժամ լինէր մութն ու խաւար.  
Երբ առաւաւոն մաւտենայր,  
60 Նա կուրացել ընկնէր ի վայր:

Բադիճոնին ասեմ այլ վայր,  
Որ ինքն ի բազ նման լինայր,  
Հետ բազերուն ի շուռ կու գայր.  
էր ինքն փոքրիկ ու խիստ տխմար:

65 Գուղուն յամէն դարուն կու գայր.  
Ի վերայ գագթան՝ ծաղիկ մի կայր.  
Նայ անիծանէր զՅուղայ ու զՊեղատոս  
Եւ զանհաւատքըն հաւսար:

70 Գուրակարարն էր խիստ բանբար,  
Զեդ զտակրար կամ զուրպարար,

41 Ե զշարն: Այս տունը՝ «Անկղն...» (13—16-րդ տողեր) տնից հետո:

42 Ե մարդու:

43 Ա նըստէր:

45—46 Ե շիբ:

49—52 Ա շիբ:

53—56 Ե շիբ:

57—60 Ա շիբ:

61—65 Ե շիբ:

66 Ա ի վերա գագթանն ծակ մի կայր: Ե մին կայր:

67 Ա Տանէր զՅուղայ ու զՊեղատոս: Ե զՄուզա:

68 Ա Ռւ զանհաւատքըն:

70 Ա կուրացարար: Ե Զեդ:

Զրոյնն զրել ի տեղ զրժար,  
Ներքերն՝ ծով, վերերն՝ ծառ:

75      Գայլագուաւուն բերան էր գայլ,  
Զեղ սատանայ սև կու փայլայր,  
Խիստ գիշակեր ու խիստ յայար,  
Խեր՝ կու կանչէր երբ քաղցենար:

80      Գուգուն առեմ, հափկ մի կայր,  
Սով ու ի ցամաք ի շուռ կու գայր,  
Չմեռըն՝ խիստ լեղառանայր  
'ի ամառն խաւշ գէր կու կենայր:

85      Դարարն գայր զետովն ի վայր,  
Հանց լայն ու մեծ դինչ նաւ կու գայր,  
Յանձն է հագել սպիտակ պայծառ  
'ի ի կտուցն մեծ ճոթոն մի կայր:

90      Եղկիանոս բադուկ մի կայր՝  
Սիրանավիղ կանաշկայփայլ,  
Դէմ արեւուն՝ վիզըն փայլայր,  
Որպէս զոսկի ծիրան կու տայր:

95      Եղնարաւատիկ համն է տրոառ,  
Հետ ակաւսին ի շուռ կու գայր,  
Քաղէր զորդունքն և կշտանայր  
Ու իր ձագերուն՝ տոնուր, զընայր:

100     Զմկընշիտն Սողոմոն դեսպան արար,  
Թէ զնա փայտ բեր, որ ոչ ծուռ է ու ոչ ճարտար.  
105     Նայ ի խարձերն ի շուռ կու գայր  
Ու ի հետ կասէր, թէ փայտ շկայր:

110     Բոանահաւն է պայծառ,  
Իր ձայն անուշ որպէս շաքար.  
Է զեղեցիկ ու խիստ պայծառ,  
Սպիտակագոյն ուղղայարմար:

71 Բ Զրունըն դնէր:

72 Բ Ներքեն: վերեն:

73—80 Բ շի:

81 Ա վար:

82 Ա գար:

83 Բ Անձն սպիտակ էր աննշմար:

84 Ա կար: Բ 'Վ ի:

85 Բ մի բալ:

86 Բ Սիրանավիղ կանանշայփայլ:

87 Բ փայլար:

88 Ա կըտայր:

89—100 Բ շի:

Քութակն ի մեծ դարպասն կայր,  
Զթողոյր զխաթունն, որ բողանայր.  
Թէ խաթունըն շնանայր,  
Զայն պարոնին խաղար կու տայր:

106 Քանիկագուան է խիստ յայար,  
Հետ ձմռանն ի շուռ կու դայր.  
Էր ինք դիշակէր ու խիստ յայար.  
Ղայ կու կանչէր երբ քաղցենայր:

110 Ժըուղուն ձայնիկն դայր  
Զեղ զերգեհոն, որ կու ցընծայր,  
Գաբրիէլի փողոյն նըման,  
Որ մեռելոցն ձայն կու տայր:

115 Իթալկուն էր խիստ ճարտար,  
Փոքրիկ ու խիստ կու վերանայր,  
Մեծ հաւեր բերէր ի վայր,  
Ամէն մէկ՝ շորս-հինկ լիտր կենայր:

120 Իշարումդուն թեն էր նկար,  
Բղոտու կողուան նման լինայր.  
Զիւր ձուն կանխէն յամէն տաճար,  
Յիւր ծիրտն՝ արմաս-երկաթն կայր:

Լըծէ-լծէն ի շուռ կու դայր,  
Եինակներուն խըրատ կու տայր,  
— լծէ-լծէ, ճարտար՝ լծէ.—  
Խոփն ի յոսկին ի ներս կերթայր:

125 Լորիկն դայր անմեղաբար,  
Ի զրիւ երթայր ու հետկըտայր.  
Երբ ի յակներըն մատենայր,  
Բնկներ ի վիզն ու թովուայր:

100 A ուզայարմար:

101 B դարպաս կենար:

102 B Պահէր զխաթուն, որ շպողանայր:

103 A Զինչ որ տիկինըն կու աւնէր:

104 B Ասէր ընդ պարոնն ու շամշնայր:

105 B 105—116 շիբ:

106 A ձըմբռանն:

117 A Իշարումդուն թենըն կայր:

118 A կողուի: B Աւզուու:

119 A Զիր: B ամէն:

120 B Կըր: յարմաս:

121—124 B շիբ:

125 B անմեղայրար:

126 A Ռւ ի: B Ռւ զրիւ:

127 B Երփի:

128 A Քըովըռայր:

130 Հուակն փոքր էր և անկար,  
Զթուղն ծակէր ու ի ներս կենայր.  
Երբ ուղտն սպլատէր՝ ագին վերնայր՝  
Մըտնէր ի յոռն, որ շիմանայր:

135 Իսին ի մորին մասխարանայր,  
Ի ծառէ-ծառ կու պոսթկտայր,  
Զեղ ուլ պառչէր, զեղ տղայ կու լայր,  
Ամէն մարդու բանիւ լինայր:

140 Խաւաւեղն ի տունն կու կենայր,  
Գիշերն երթայր ելներ ի թառ,  
Երբ կուկլուկէր, ծափուցն տայր,  
145 Ի հրեշտակաց առնու բարբառ:

Խութլու խաթունն երբ բաղցենայր,  
Նա կու ճորայր ու զբրդըրայր.  
Երբ որս այնէր ու կըշտանայր,  
Լուկ զեղ բղմարդ կու բըրբըռայր:

145 Սառկտուցն ի ծառն երթայր,  
Զբոյն փորէր ի ծառն ի վայր,  
Զփայտն կոփէր զեղ բզնաճար,  
Որ սղոց ու երկաթն շղիմանայր:

150 Սիծեռնիկն ելել ու եկել  
Յիւր հայրենի տուն և տաճար,  
Ի տաճարին վերայ նստէր,  
Սաղմոս ասէր ինքն անդադար:

155 Կոընկինն երամ կապին  
Եւ հետ իրաց երթան ի շար,  
Կանշեն մէկ զհետ մէկի,  
Ի շարկամաց կենան բեկառ:

Կաքաւն ի քարըն կու կենայր,  
Կու կարկըճէր ի քարուիքար,

129—132 Բ չիբ:

133 Բ կիբն:

134 Ա պորտքկայր:

135 Ա պռչէր: տղա կու լար: Բ զուլ:

136 Բ Ու ամէն:

137—148 Բ չիբ:

149 Բ Սիծըռնիկն:

150 Բ Իւր հայրեն տունն ու տաճարն:

154 ԱԲ հետ:

157 Բ 157—168 չիբ:

160 Զքաջ արծըւու շաշունն առնէր,  
Մէջքն բեկէր ու ընկնէր ի վայր:

Կաքամն է խայտիւ շինելու,  
Զինքըն խայտուել է խիստ պայծառ,  
Զոտքն ու զկտուցն հինայել  
'ի ի լերանքն ի շուռ կերթար ու զայր:

165 Կովկորոյսն են քոյր ու եղբայր,  
Կովն կորել ու ի շուռ կու զայր.  
Քոյրըն հարցնէր, թէ «զկովն դտա՞ր».  
Նա եղբայրն ասէր, թէ «Համ չկայր»:

Կեռ կտուցիկ հաւուկ մի կայր,  
170 Հագնէր կապուտ ու պարծենայր,  
Թէ՝ զայդ հաւերտ որ գովեցէր՝  
Զեղ զիմ փետուրս իսկի շկայր:  
  
Կիվին է զինչ զարեղայ,  
Վեղար դրել զլխոյն վերայ,  
175 Հաւըն ի ճղանքն կու կենայր  
Զգողն ու զտրոառ մարդն յիմանայր:

Կանշուկ համն երբ ցրտանայր,  
Զուբա կուզէր իր մանտրկար,  
Երբ որ կոնակն զերանայր,  
180 Նայ ոչ շուրայւ ոչ մանտրկար:

Կասկամն կախւել ընդ ծառն ի վայր,  
Յաշիցն արին կու կաթկթայր,  
Կու կանշէր հազար զինահար.  
Մէկ մի շերթայր՝ առնոյր ի վայր:

185 Հաւալասան հաւիկն ողբայր՝  
Որ ի Դաւթեան Սաղմոսն կայր,

163 A հինաել:

168 A հօն:

169 B Կուայկոայ հաքուկ մին կայր:

170 B Հագել կանանչ ու պարծենայր:

171 B թէ այտ ամէն հաւերտ որ կայր:

172 B զիտ:

173—160 B շիբ:

181 A Կասուկամն: B կախվել ի ծառն: Այս տոնը «Կեռ կտուցիկ»-ից (169—172-րդ տողեր) առաջ:

182 B Ֆաշին:

183 B զէնհար:

184 B Մէկ մին: առնէր ի վայր:

185 A Հաւալսան համն է պայծառ:

186 A Ինքն ի Դաւթայ: կար:

ինքն յանապատն կու կենալը.  
Աւրինակ էր զքրիստոս արդար:

Հորակն մեծ հաւ կերենալը,  
190 Ի շուռ կու գայր բուշնի համար.  
Կապոյտ հազել էր և կու լայր,  
Զեղ սպառը անմիխթար:

Չինձինիկ հաւուկ մի կայր,  
Որ ինքն յամէն աշուն կու գայր,  
195 Գայր ու հանց խապար կու տայր.  
Թէ՛ ով տուել կապա՝ ի կար,  
Ասոր ցուցէր՝ ձինն կու գայր:

Չըկնկլուն ըռասմն կայր,  
Որ զաւրըն ձուկն կըլանէր,  
200 Չիր ժամանակն չկշտանալը,  
Փորն որդնած, և հոտն գայր:

Ճնճղուկն ի շէնքն կու կենալը,  
Յամէն ցվիք կու ճզճվալը,  
Ինքն ապրէր տարիք հազար,  
205 Ով զինքն ուտէր՝ խիստ շնանալը:

Ճընճղկիկ, բարակ ճըվիկ,  
Իր կերակուրն երկու հատիկ,  
Երթայր մըտնէր ի նեղ ծակիկ  
Ու այնով այնէր զաւրըն զատիկ:

210 Ճայեկն ի յաւդըն վերանալը,  
Բոլոր երկնաւրըն գան ի պար,

187 Ա աստուած փխ արդար:

188 Ա Զմեր տէրն որ յեւթն երկինքն կար:

189 Ա Հաւրալի: Յ կու երենալը:

191 Յ Կապոյտ: ու:

192 Ա սպառը ու անմիխթար:

193—197 Յ Այս հինգ տողի փախարեն ունի.

Չինձնուկն ձայն ածէր  
Վասն ձմռան եփ ձունըն գայր.  
Թէ՛ ո՞վ կապայ ունի անկար,  
Թող շուտ կարէ, որ չցրտանալը:

198—201 Յ Ժի:

202 Ա Ճընճղուկն: կենար: Յ Ճյնճղուկն:

203 Ա ցվիք իր ճայերն զար: Յ Ամէն:

204 Ա ինք ապրի տարի հազար:

205 Ա Ով զնա ուտէր խիստ շընանար: Յ նա փխ խիստ:

206—217 Յ Ժի:

210 Ա յաւթըն:

Երթան խաղան մարգեր ի վայր,  
Տանին զիրենց սէրն ի կտտար:

Մանկղաթեին պիտի խղճալ,  
215 Ինքըն շկարէր նըստիլ ի վայր,  
Քաւ էլ թէ բարձրը տեղ լինայր,  
Որ ինք թըռչէր յայնկից ի վայր:

Մեղվընքաղին մեղքն էր յերկար,  
Թողել զմորեխն, որ շէր շահրար,  
220 Զմեղուն քաղէր անխղճարար.  
Մեղուն դատէր մեղրի համար:

Մաշկաթեին փետուր շկայր,  
Զինչ որ գործէ զսէկըն կաւշկար.  
Ունի ականջ ու ագին ի վայր,  
225 Ցիստակ զեղ մուկն է ոստրւար:

Յուղոպիկն էր զարդարեալ,  
Ի գլուխն ունէր թագ և կատար,  
Ինքն յեզր շինին կենայր  
Եւ ի պարիսալ քաղքին ձայն տայր:

230 Յովանահաւն փըշէր սաֆար,  
Զեղ զեղեզան իր ձայնըն դայր.  
Հագել է լուրջ ու զեղին շար,  
Ի պաղանին ի շուրջ կու դայր:

Շահէն քաղէն էր շահարար,  
235 Ինքն յամէն դարպաս կենայր,  
Յուր որ աղուոր պարոնըն կայր՝  
Ի վերայ քաղկին ի շուր կու դայր:

Շահեն քաղէն համլայ դընէր,  
Ինքն զհաւերն ի վայր կու տայր,  
240 Զեղ ըզթուխ ամպ ինք զիղանայր,  
Կարկուտ ածեր ու կայժկտայր:

218 B [Մ]եղվըրդուն մեղքն է:

219 B շէ:

220 B Կուտէ զմեղուն անխղճայրար:

221 B Որ կու դատի մեղրի համար:

222—225 B շիր:

226 A Յաւպաւալիկն է: B [Յ]ոպոպիկն էր զարդարել:

227 A Ու ի գլուխն ունի թաճ:

228 A Ինքն կենայր յեզր ի շինի: B էրակ վիս ինքն:

229 A Կամ ի պարիսալ քաղքի:

230 B 230—273 շիր:

Շաշորդ հաւուն լեզու շկայր.  
Զիր ժամանակն մունչ կենայր,  
Այլ իրք շուտէր ինք, քան զմուրտար  
245 Կամ մեծ ոսկոր-որ կրլանայր:

Շնարաւոն զերդ ներկըրար,  
Կարմիր երեսք, դեղին աստառ,  
Ի շամբերըն կու կենայր,  
Շընլակոտի պէս կաղկընձայր:

250 Շալամ, ասեն, հաւուկ մի կայր,  
Որ լրդտու կոզեռն նմանէր,  
Զեղ ըղխաւաւող ինք ձայն ածէր,  
Երբ ծափ զարկնէր՝ ինքըն խաղայր:

Ուրուրն ի շէնըն կու կենայր՝  
255 Զեղ հարամի կամ զեղ թաթար,  
Առնոյր զհաւագն ու բարձրանայր,  
Թէ հազար մարդ կանկնած կենայր:

Ոսկըրկուն էր խիստ խիկար,  
260 Զափով զոսկորն ի կու կու տայր,  
Թէ աւելի քանց զհաղն երթայր,  
Նայ լուկ մեռնիլն էր նորա ճար:

265 Զոր Յակորին պիտի խրդճալ,  
Վիզն է բարակ ու անձն է նիհար,  
Զաւոն ի գետափըն կու կենայր,  
Զողջն աւոն ու մէկ ձկան համար:

270 Զըտիկ փոքրիկ հաւիկ մի կայր,  
Իր բոյն ի մէկ մազէ լինայր,  
Երբ որ հարաւ քամին շնշայր,  
Իր ձագերուն սա մահ կու տայր:

275 Զիտն-թզովն ինք գիրանայր,  
Հաւկոյթ ներկէր ինքն ճարտար,  
Առանց տաւրուն ու առանց ժանկառ,  
Հաւկիթ ներկէր զատկի համար:

280 Զիտն-թզովն ինք գիրանայր,  
Հաւկոյթ ներկէր ինքն ճարտար,  
Առանց տաւրուն ու առանց ժանկառ,  
Հաւկիթ ներկէր զատկի համար:

252 Ա ըզկաւաւող:

274 Բ [Չ]իտն ի խաղող գիրանայր:

275 Բ Հաղող շրովն հարրենայր:

Ելներ, նստէր ի վերայ ձղին,  
Ու տայր զամէն շոր թուղն ի վայր:

Պլպուլն ի վարդն կարաւանայր,  
Զինչ որ սիրեն երկուք զիրար.  
280 Քանի զնա կու հոտոտայր,  
Միրոյն լինէր խև ու խումար:

Պլպուլն ասէր խաղ ու խաղալ,  
Զվարդն ու զնոճէսն գովէր յիրար,  
Ինքն խաւսէր խիստ անդադար,  
285 Զեղ զինէհար մարդ ու խումար:

Պրզպըզուն գրլուխն է քար,  
Ինքն ի Հընդկաց աշխարհըն կայր,  
Ի գլուխն ծեծեն երկաթ ու քար,  
Եայ իսկի շասէ, թէ ցաւ կու տայր:

290 Զահրիկն փոքր էր զետ ծրար  
Ու զընզընայր զեղ մանծըրար.  
Շաբաթն ի բուն ինքըն ջանայր  
Ու Կիրակին՝ մանած շը կայր:

Զարուն ասէր արուեստաբար  
295 Զեղ զեհենի պէս կու ցոլայր,  
Զեղ Գարրիէլ զփողըն գոշէ,  
Յառնեն մեռհալքըն հաւասար:

Սընդուր բաղայն երբ բարձրանայր,  
Զիւր շուրքն ի ջուրըն տեսընայր,  
300 Դիտէր, թէ հաւ էր կրոռւարար,  
Իջնոյր խեղդէր ի ջուրն ի վայր:

276 В Զետ հարբած մարդ ասեր ընդ ալ:

277 В Զիտն թոշէր լուկ ճովուայր:

278 [Պ]լպուլն կարաւանայր:

280 А նա: В Վարդն թավլէր ու հարբենայր:

281 В Միրոն զանայր:

286—289 В շիբ:

290—293 В առնեն է.

Զախրիկն փոքր է զեղ ծրար,  
Զընզըն այնէ զեղ մանծըրար,  
Մանէր զաւըն ու զդիշէրն ի ծարէ-ծար,  
Յետնն իսկի մանած շկայր:

294—297 В շիբ: Ապա՝ «Ասղզըին», «Մարիկիկն», «Մանդուր բաղան»:

298 В Թանզուր բայ[...] մլայ զնայր (Հալանաբար՝ բազան Էամլայ):

299 Զիր: Տեսընոյր: В ջուր [...] այր:

300 В Դիտէր, թէ որս է ու գնայր:

301 В [եե]խտէր ընդ ջուրն ի վայր:

- Սիրամարգ հաւն էր թագ յարմար,  
ի զլուխն՝ երեք փետուր պայծառ,  
երեքճղին մարգարտաշար.
- 305 Եւր անձն ամէն՝ ակն ու գաւհար:  
Կուրծքն ու շըլնիքն էր դար ի վայր,  
կուրչ ու կապոյտ ծիրան կու տայր,  
թեսերն ամէն զբմբութ ու լալ,  
Ոսկի ակունք՝ արծաթափայլ:
- 310 Ազին յերկայն, շառուեղք ու լար,  
Զեղ զերկընուց կարմիր կամար,  
Լուսընկայն բոլրէր ի նայ  
Կամ զարեգակն, որ դայր ի մայր:
- Սաղն ի յարաւտ երթայր ու գայր,  
315 Զեղ բզպախրէ կամ զետ ոշխար,  
Սղոց ունէր զեղ դանկըրար,  
Երբ զողըն դայր՝ շոյտ յիմանայր:
- Սախայ հաւն ընդ վիզն ի վայր  
Տըկճոր՝ ջըրով ու ի շուռ կու գայր,  
320 Յանջըրդիքըն շուր կու տայր  
Այլ ձագերուն, որ շծարւենայր:
- Սաղգրիւն երթայր ընդ սաղն ի վայր,  
Շատ մի ճանպահ ու շխոնչենայր,  
Բոլոր ծովուն առնու շամբար.  
325 Մարդ ի յիրեանց հոգըն շկայր:
- Սարեկն ասէր ու դողդղայր,  
Զեղ սարսրփոտ կամ դիւահար,  
Զեղ բզխաղցաւղ շալփալազարկ,  
Ինքըն զարնէր ու ինքըն խաղայր:
- 330 Սալամն անդէտ էր ու յիմար,  
Հայէր ի մարդն ու փախչենայր.  
Երթայր մտնէր ի ծակն ի վայր,  
Ազին ու թերն ի դուրս կենայր:

---

302—321 Բ չի:

- 314 Ա Սաբն:  
323 Բ շխոնհենար:  
324 Բ առն շամբար:  
325 Բ յիրեանց:  
326 Բ Սարիկիկն ասէր ու ի դող ելնէր:  
327 Բ Զեղ սարսափոտ կամ դիւահար:  
328 Բ Զելտ] զխաղացող շալփալալզարկ:  
329 Բ Ինքն: ու ինքն: զարնէր չի:
- 330—333 Բ չի:

Վարժնակն զայր զեղ մնչնայքար,  
 335 Զարկնէր զձագուց երամն ի վայր.  
 Փախշին հաւերն, ընկնին ի վայր,  
 Ներքե թրփին՝ երեսք ի վայր:

Տատըրկիկն աւետարեր  
 Քաղցըր խաւսէր ինքն և ցնծայր.  
 340 Ի վերայ վիմի բարձրը նըստէր,  
 Գուշակ լինէր զարնան համար:

Տէր Գրիգորիկ հաւիկն արդար,  
 Զեղ վարդապետ բարող կու տայր,  
 Ի վերայն հազել կապոյտ շուրջառ,  
 345 Զեղ բահանայ հանդարտաբար:

Տան հաւն ի տունն կու կենայր,  
 Զեղ կուրատոր խիստ կու ճոխայր,  
 Դեղէր ըզտունն ու շամշնայր  
 Ու երբ կու աւելին, այլ կու լնայր,  
 350 Սիրա հանէր զտէրն, որ խինայր,  
 Բայց հաւելիով մի հեշտենայր:

Բաքիլ, ասեն, հաւուկ մի կայր,  
 Որ ի Հընդկաց աշխարհըն կայր,  
 Ի քթէն ընկնէր ակն ու դաւհար,  
 355 Բան ըզծովու այլ աղէկ շաւհար:

Քրթակնիկ հաւուկ մի կայր,  
 Մե հաւի փուշըն կու կենայր,  
 Թըսվզք այնէր, ոտաւքն երթայր,  
 Ինքն յանջրբղիքըն կու կենայր:

360 Քարբղին բոյնն է դրժար,  
 Որ է շինել երկաթ ու բար  
 Ու է դըրիլ ի խիստ դրժար  
 Եւ ի ներքերն ծով էր և բար:

334 Ա մնչնքար: Յ զերդ:

335 Ա ու ընկնի: Յ Հաւքն զողան: Վար:

337 Յ ներքե թեին:

338 Յ աւետայրի:

340 Յ վիմին նստէր: Բարձրը շիմ:

342 Յ Տէր Գրիգոր հաւուկն:

343 Յ զետ վարդայպետ:

344 Ա շըրջառ: Յ Անձն հազել կապուտ:

345 Յ հանդարտայրար: Այստեղ ընդհատվում է. սկսվում է այլ նյութ. «Սառն, որ պօտովն ի վայր գայ, Գ խաշափառ կախէ, այլ վայր շգայր...»:

355 Ա շօհար:

358 Ա ուստըն:

365      Քաջ արծուուն նման շկայր,  
                Երբ շապրնչէր յաւդից ի վայր,  
                Նայ սասանին հաւը հաւասար,  
                Լապրստակունը, վայրի ովար:

А. Ш. МНАЦАКАНЯН

## СТИХОТВОРНЫЙ ЦИКЛ «ВОСХВАЛЕНИЕ ПТИЦ», ЕГО АВТОР И ВРЕМЯ СОЧИНЕНИЯ

### (Резюме)

Начиная с XVII в., в армянских средневековых рукописях обнаруживаются многочисленные варианты стихотворного цикла, посвященного восхвалению птиц и связанного с именем Тер Ованеса. Многие из них так и печатались и распространялись как разновидности творчества Тер Ованеса. В настоящей статье приводятся аргументы в пользу того, что автором «Восхваления птиц» является не Тер Ованес, а епископ Киракос, а также в пользу того, что последний жил в XIII—XIV вв. В качестве основания использованы рукописи Матенадарана им. Маштоца № 3595 и 738, первая из которых переписана в XV в., а вторая—в XVI—XVII вв. Обе они не опубликованы, здесь впервые представлен их критический текст. Выясняется, что «Восхваление птиц» было первоначально написано в порядке армянского алфавита (*Ա—Ք*), затем были беспорядочно выведены отдельные строфы как принадлежащие перу Тер Ованеса. Этот Ованес отождествлен с Ованесом Кипреци, жившим в XVII в.

Стихотворный цикл епископа Киракоса «Восхваление птиц» принадлежит к числу тех уникальных образцов секуляризирующейся армянской литературы X—XIV вв., которые совершенно свободны от дани религии и проповеди. Этот цикл очень важен с точки зрения литературоведения. Велико его значение и с точки зрения естествознания и зоологии, ибо в девяносто одной его строфе восхваляются и характеризуются 80 птиц.

A. MNATSAKANIAN

## LE CYCLE POÉTIQUE „LOUANGE DES OISEAUX“, SON AUTEUR ET L’ÉPOQUE DE SA CRÉATION

### (Résumé)

A partir du XVII<sup>e</sup> siècle dans les manuscrits arméniens on découvre de nombreuses variantes du cycle poétique consacré à la louange des oiseaux et lié au nom de Ter Hovhannes. Beaucoup d'entre elles ont été publiées comme des variantes de son oeuvre. Dans cet article l'auteur

développe des arguments en faveur de ce que le poète des „Louanges des oiseaux“ n'est pas Ter Hovhannes, mais l'évêque Kirakos et de ce que ce dernier a vécu aux XIII<sup>e</sup>—XIV<sup>e</sup> siècles. L'auteur de l'article a utilisé comme base les manuscrits du Maténadarān Machtotz Nos. 3595 et 788, dont le premier a été copié au XV<sup>e</sup> siècle et le second aux XVI<sup>e</sup>—XVII<sup>e</sup> siècles. Aucun d'eux n'est publié et leur texte critique est présenté ici pour la première fois. Il apparaît que la „Louange des oiseaux“ a été rédigée d'abord dans l'ordre de l'alphabet arménien (*Ա-Բ*), puis des strophes séparées ont été introduites en désordre comme appartenant à la plume de Ter Hovhannes. Cet Hovhannes et Hovhannes Kiprutsi, qui a vécu au XVII<sup>e</sup> siècle, sont identifiés.

Le cycle poétique de l'évêque Kirakos „Louange des oiseaux“ est au nombre des rares spécimens de la littérature arménienne sécularisée des X<sup>e</sup>—XIV<sup>e</sup> siècles qui sont absolument libres de tout tribut à la religion et aux sermons. Ce cycle est très important du point de vue de l'histoire de la littérature. Son importance est grande également du point de vue des sciences naturelles et de la zoologie, car dans ses quatre-vingt-onze strophes l'auteur loue et décrit quatre-vingts oiseaux.